ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/75

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.02.2022թ. թիվ 26/26-1/2912-2022 գրությամբ «ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 11.02.2022թ. թիվ ՍՄ/ԿԲ-4/3498-2022 գրության հիման վրա, 18.02.2022թ. թիվ 26/26-1/2912-2022 գրությամբ նախաձեռնել է «ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/75 ընթացակարգի շրջանակներում 25.02.2022թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 11.02.2022թ. թիվ ՍՄ/ԿԲ-4/3498-2022 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության ք. Երևանի և Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի պետական ոչ առևտրային կազմակերպության 2022 թվականի կարիքների բավարարման նպատակով հանդերձանքի և անկողնային պարագաների կենտրոնացված կարգով՝ «էլեկտրոնային աճուրդ» գնման ընթացակարգով ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/8-ԵԽ ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ն առաջին տեղ զբաղեցնող մասնակից է հանդիսանում: «ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի ներկայացված հայտում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը, օրենդրությամբ սահմանված կարգով տրվել է շտկման հնարավորություն, սակայն չի կատարվել շտկումը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թվականի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները, «ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ին գնումներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը նախաձեռնելու նպատակով, Ձեզ եմ ներկայացնում վերոնշյալ գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի փաթեթը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/75 ընթացակարգի շրջանակներում 25.02.2022թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/75 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/75 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից «ԱՍՀՆ ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների ք. Երևան և Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք 2022 թվականի կարիքների համար՝ հանդերձանքի և անկողնային պարագաներ»-ի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/8-ԵԽ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.02.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի հայտում իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը բացակայում է, այնուհետև՝ արձանագրել է, որ Ընկերության կողմից չի կատարվել համապատասխան շտկումը:

3. Նույն արձանագրության 6-րդ կետի 6-2-րդ ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

4. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 11.02.2022թ.՝ թիվ ՍՄ/ԿԲ-4/3498-2022 գրությամբ:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.02.2022թ. թիվ 26/26-1/2912-2022 գրությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 11.02.2022թ. թիվ ՍՄ/ԿԲ-4/3498-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.2, 8.9, 8.11 և 8.15 ենթակետերի համաձայն՝

8.2 ***<u>Էլեկտրոնային աճուրդը սկսվում է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 2022.01.13. 15:30-ին:</u>*** Եթե աճուրդը սկսելու

օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա աճուրդը սկսվում է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրվա նույն ժամին: Աճուրդ չի կարող կազմակերպվել ոչ աշխատանքային օրերին կամ աշխատանքային օրվա ժամը 16:00-ից հետո:

8.9 ***<u>Աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը</u> հրավիրվում է գնահատող հանձնաժողովի նիստ, որի ընթացքում՝***

1) ***<u>գնահատվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերի՝ սույն հրավերին պահանջներին համապատասխանության հանգամանքը</u>***.

2) մերժվում են մյուս մասնակիցների հայտերը:

(...)

Գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը յոթանասունհինգը չգերազանցելու դեպքում ***առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատումն իրականացվում է գնահատող հանձնաժողովի հրավիրված նիստժը սկսելու օրվանից հաշված տաս***, իսկ գերազանցելու դեպքում՝ տասնհինգ ***աշխատանքային օրվա ընթացքում***:

8.11 ***<u>Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում,</u>*** ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը***: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: <u>Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում</u>, ներառյալ եթե սույն հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի

ներկայացրել դրա բնօրինակը, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

8.15 ***Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված <u>հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում</u> պատվիրատուն առաջին տեղը զբաղեցրած մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին***, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ: Ընդ որում, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակցի գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից «ԱՍՀՆ ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների ք. Երևան և Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք 2022 թվականի կարիքների համար՝ հանդերձանքի և անկողնային պարագաներ»-ի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/8-ԵԽ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.02.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի հայտում իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը բացակայում է, այնուհետև՝ արձանագրել է, որ Ընկերության կողմից չի կատարվել համապատասխան շտկումը:

Նույն արձանագրության 6-րդ կետի 6-2-րդ ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի

կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 11.02.2022թ.՝ թիվ ՍՄ/ԿԲ-4/3498-2022 գրությամբ՝ մասնավորապես հայտնելով հետևյալը.

««ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի ներկայացված հայտում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը, օրենդրությամբ սահմանված կարգով տրվել է շտկման հնարավորություն, սակայն չի կատարվել շտկումը»:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: ***Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Այսպիսով՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ հստակ սահմանված են հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի և քարտուղարի կողմից իրականացվող գործողությունների հաջորդականությունը, ***մինչդեռ՝ ուսումնասիրելով «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/8-ԵԽ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 09.02.2022թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ իրականացված գործողությունները պարզ է դառնում, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն՝ արձանագրելով այն փաստը, որ Ընկերության հայտում առկա է անհամապատասխանություն և վերջինիս կողմից շտկում չի կատարվել, Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ որոշում կայացնելու փոխարեն, նույն արձանագրության համաձայն՝ որոշում է կայացրել «ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ, այնուհետև՝ առանց Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու, Կարգի 45-րդ կետի համաձայն՝ 11.02.2022թ. թիվ ՍՄ/ԿԲ-4/3498-2022 գրությամբ Ընկերության տվյալները՝ համապատասխան փաստաթղթերով, ներկայացրել է***

լիազորված մարմնին՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Վերը շարադրված փաստական հանգամանքներով պայմանավորված՝ գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.02.2022թ. թիվ 26/26-1/2912-2022 գրությամբ «ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**